

ՀԱՆՁՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

« _____ » _____ թ.

վայրը _____

կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները այսուհետ՝ «Հանձնակատար», ի դեմս՝ _____, որը գործում է _____ ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մի կողմից, և _____ կազմակերպության անվանումը կամ ֆիզիկական անձի ազգանունը, անունը, հասցեն, անձնագրի տվյալները այսուհետ՝ «Հանձնարարող», ի դեմս՝ _____, որը գործում է _____ ազգանունը, անունը, պաշտոնը

հիման վրա, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Հանձնակատարը պարտավորվում է Հանձնարարողի անունից և նրա հաշվին կատարել որոշակի իրավաբանական գործողություններ, մասնավորապես՝ _____:

1.2. Հանձնակատարի կնքած գործարքներից բխող իրավունքները և պարտականությունները պատկանում են Հանձնարարողին:

2. Կողմերի իրավունքները և պարտականությունները

2.1. Հանձնակատարը պարտավոր է՝

2.1.1. իրեն տրված հանձնարարությունը կատարել անձամբ,

2.1.2. Հանձնարարողի պահանջով նրան հաղորդել հանձնարարության կատարման ընթացքի մասին բոլոր տեղեկությունները,

2.1.3. ի կատարում հանձնարարության՝ անհապաղ Հանձնարարողին հանձնել գործարքներից ստացածը՝ համապատասխան փաստաթղթով,

2.1.4. հանձնարարությունը կատարելուց կամ մինչև դրա կատարումը պայմանագիրը դադարելուց հետո, Հանձնարարողին անհապաղ վերադարձնել բոլոր փաստաթղթերը, այդ թվում՝ լիազորագրերը և հաշվետվությունները կայացնել: Հաշվետվությանը կցվում են Հանձնակատարի ծախսերը հաստատող այն փաստաթղթերը, որոնք կապված են սույն պայմանագրից բխող հանձնարարությունը կատարելու հետ:

2.2. Հանձնարարողը պարտավոր է՝

2.2.1. սույն պայմանագիրը ստորագրելու պահից _____ (_____) օրվա ընթացքում Հանձնակատարին տալ սույն պայմանագրով նախատեսված գործողությունների կատարման լիազորագիրը,

2.2.2. հաստատել Հանձնակատարի կրած ծախսերը, որոնք դուրս չեն փոխհամաձայնեցված պայմաններից,

2.2.3. հանձնարարությունը կատարելու համար Հանձնակատարին ապահովել անհրաժեշտ միջոցներով,

2.2.4. Հանձնակատարից անհապաղ ընդունել պայմանագրին համապատասխան ամբողջ կատարվածը,

2.2.5. սույն պայմանագրի 3-րդ բաժնով սահմանված կարգով վարձատրել Հանձնակատարին:

2.3. Հանձնակատարը պարտավոր է իրեն տրված հանձնարարությունը կատարել Հանձնարարողի ցուցումներին համապատասխան,

Հանձնակատարը, ելնելով Հանձնարարողի շահերից, իրավունք ունի հրաժարվել նրա ցուցումներից՝ առանց այդ մասին նրան նախօրոք տեղեկացնելու:

2.4. Հանձնակատարը վարձակալության պայմանագիրը կնքում է հետևյալ պայմաններով՝

_____:

3. Հանձնակատարի վարձատրությունը

3.1. Կատարված հանձնարարության համար Հանձնարարողը Հանձնակատարին վարձատրում է _____ դրամի չափով:

թվերով և բառերով

3.2. 3.1 կետում սահմանված վարձատրությունը Հանձնարարողը վճարում է կատարված հանձնարարության մասին հաշվետվությունը Հանձնակատարի կողմից ներկայացնելու պահից _____ օրվա ընթացքում:

3.3. Հանձնակատարի կրած ծախսերը, դրանք հաստատող փաստաթղթերի հիման վրա, Հանձնարարողը պարտավոր է հաստատել՝ վարձատրելով նրա կատարած աշխատանքին համաչափ:

4. Պայմանագրի գործողության ժամկետը և դադարելու կարգը

4.1. Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և իր գործողությունը շարունակում է մինչև _____:

4.2. Սույն պայմանագիրը ենթակա է դադարեցման՝

ա) Հանձնարարողի կողմից հանձնարարությունը վերացնելու դեպքում,

բ) Հանձնակատարի հրաժարվելու դեպքում,

գ) օրենսդրությամբ սահմանված այլ հիմքերով:

4.3. Սույն պայմանագրից հրաժարված կողմը պետք է մյուս կողմին տեղեկացնի պայմանագիրը դադարեցնելու մասին ոչ ուշ, քան 30 (երեսուն) օր առաջ:

5. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄՍԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել:

Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծարել պայմանագիրը՝ այդ մասին տեղյակ պահելով մյուս կողմին:

6. Այլ պայմաններ

6.1. Սույն պայմանագիրը կնքված է հայերեն լեզվով, երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուրին կողմին տրվում է մեկական օրինակ:

6.2. Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կազմվում և ստորագրվում են Կողմերի կողմից:

7. Կողմերի հասցեները, վավերապայմանները և ստորագրությունները

Հանձնարարող

ստորագրություն

Հանձնակատար

ստորագրություն